

**ԹՈՒՐԹ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր – Աշխարհաքաղաքական մարտահրավերներ, Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ, ֆուտբոլային դիվանագիտություն, արձանագրություններ, Թուրքիա, Հայաստան, Ադրբեջան, Հայոց ցեղասպանություն

Ա. Հարավային Կովկասում 2008 թ. վրաց-ռուսական հնգօրյա պատերազմից հետո ձևավորված իրավիճակը և Թուրքիայի քաղաքականությունը

2008 թ. օգոստոսին ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո Հարավային Կովկասում Թուրքիայի քաղաքականության մեջ տեղի ունեցան զգալի փոփոխություններ, որոնք թելադրված էին պատերազմի հետևանքով ձևավորված նոր իրադրության տրամաբանությամբ: Հարավային Կովկասն ականատես եղավ նոր աշխարհաքաղաքական վերադասավորումների: Պատերազմում տանելով համոզիչ հաղթանակ՝ ՌԴ-ն վերստին ակտիվացրեց իր դերակատարությունը տարածաշրջանային հակամարտություններում: Նրա հաջորդ քայլը ՀՀ-ի հետ ռազմական համագործակցության պայմանագիրը երկարաձգելու առաջարկն էր¹:

Նման իրավիճակն առաջին հերթին անդրադարձավ Թուրքիայի վրա, հատկապես երբ ՀՀ-ի իշխանությունները հանդես եկան Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման նախաձեռնությամբ: Աշխարհաքաղաքական առումով Թուրքիան հայտնվեց բարդ իրավիճակում: Տարածաշրջանային առաջատարի դերակատարությանը ձգտող, ուստի համատարածաշրջանային ծրագրերի հովանավորությամբ հանդես եկող պետությունը², ՀՀ-ի հետ նման հարաբերությունների մեջ ընդգրկվելով, վերածվում էր տարածաշրջա-

¹ Протокол № 5 между Российской Федерацией и Республикой Армения о внесении изменений в Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения от 16 марта 1995 г., 20.08.2010, http://www.mid.ru/BDOMP/spd_md.nsf/0/2C173CA176462C4044257C200022C35F.

² Տե՛ս Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ. // «21-րդ դար», 2012, թիվ 6 (46), էջ 38:

նում առկա խնդիրների և հակամարտությունների մասնակցի, ավելին՝ «թարմացվում» էր մի հակամարտություն, որը Թուրքիան վաղուց ի վեր ձգտում էր «արխիվացնել»: Թուրքիան այժմ ստիպված էր «հավասար» հարթության վրա գտնվելու ՀՀ-ի հետ: Դեռ ավելին, այն, որ Թուրքիան այլևս չէր ընկալվում որպես տարածաշրջանային խնդիրների լուծման դերակատար, վերտարածաշրջանային «դերակատարների» մուտքի դուռ բացեց, որոնք սկսեցին ուղղորդել հայ-թուրքական հաշտեցման գործընթացը: Թուրքիան, հասկանալով իր տարածաշրջանային քաղաքականության տապալման հեռանկարը, բայց նաև անհրաժեշտաբար հարաբերություններ սկսելով ՀՀ-ի հետ, շուտով դեմ առավ մյուս խնդիրն՝ Ադրբեջանի ծայրահեղ մերժողական դիրքորոշմանը¹:

Այսպիսով, պատերազմից հետո պարզ դարձավ Թուրքիայի՝ տարածաշրջանային առաջատար դառնալու հնարավորությունների բացակայության փաստը, ավելին՝ այն ներքաշվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման դաշտ: Թուրքիան սկսում է աստիճանաբար կորցնել դիրքերը, որը նշանավորվում է ՌԴ-ի՝ Հարավային Կովկաս «ներխուժմամբ» և ԱՄՆ-ի ու Եվրոպայի մասնակցությամբ Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման նոր փուլի սկզբնավորմամբ: Տարածաշրջանային առաջատարի երազանքներ փայփայող Թուրքիան հայտնվում է տարածաշրջանային հակամարտությունների կիզակետում:

Այդ է պատճառը, որ 2008 թ. Թուրքիան վերակտիվացրեց «գրո խնդիրներ հարևանների հետ» քաղաքականությունը և փորձեց հանդես գալ տարածաշրջանային ծրագրերով, որոնցից մեկը Ռ. Թ. Էրդողանի առաջ քաշած Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմի գաղափարն էր²:

Թուրքիայի՝ պլատֆորմը կյանքի կոչելու գլխավոր նպատակն էր չեզոքացնել պատերազմից հետո տեղի ունեցած փոփոխությունները և վերահաստատել իր տարածաշրջանային դերակատար լինելու հանգամանքը: Այս առումով նրան հատկապես խանգարում էր ԱՄՆ-ի «մուտքը» տարածաշրջան, որը կհանգեցներ Թուրքիայի գլխավոր հովանավորի կողմից իրավիճակին տեր կանգնելու անխուսափելիության, այն է՝ Թուրքիայի դերի աստիճանական նվազեցման: Մինչդեռ ՌԴ-ի հետ նման պլատֆորմի իրականա-

¹ Stéu Shiryev Z. and Davies C., The Turkey-Armenia-Azerbaijan Triangle: The Unexpected Outcomes of the Zurich Protocols // Perceptions: Journal of International Affairs, Spring 2013, Vol. XVIII, n° 1, p. 191-194; Азербайджан резко критикует соглашения между Турцией и Арменией, 11.10.2009, <http://top.rbc.ru/politics/11/10/2009/336299.shtml>.

² Նման գաղափար Թուրքիան առաջ էր քաշել դեռևս 1999-2000 թթ., որը հաջողությամբ չէր պսակվել: Երկու նախագծերի հիմնական տարբերությունն այն էր, որ ըստ առաջինի՝ հարավկովկասյան կայունության և անվտանգության համակարգում, բացի անդրկովկասյան պետություններից, Թուրքիայից և Ռուսաստանից, պետք է ընդգրկվեր նաև ԱՄՆ-ը (“Regional Envoys to Discuss Stability Pact”, February 29, 2000, UN Wire, http://www.unwire.org/unwire/20000229/7454_story.asp; http://www.nytimes.com/2008/08/24/opinion/24iht-edoskanian.1.15583425.html?_r=1):

ցումը կոչված էր վերստին արժևորելու Թուրքիայի դերակատարությունը Հարավային Կովկասում¹:

Այդ համատեքստում ուշագրավ էր ՀՀ-ի դիրքորոշումը պլատֆորմի նկատմամբ, որը մեծապես պայմանավորված էր ՌԴ-ի դիրքորոշմամբ: Վերջինս ի վերջո հրաժարվելու էր այդ նախաձեռնությունից կամ անհրաժեշտ պահին դա տապալելու էր պարզ պատճառով, որ նախաձեռնողը Թուրքիան էր, որն ավանդաբար ՌԴ-ի հակառակորդն էր Հարավային Կովկասում և XXI դ. սկզբին հարավկովկասյան վառելիքի փոխադրման հարցում առավելության էր հասել նրա նկատմամբ²:

Պլատֆորմի տապալմանը զուգընթաց՝ ակտիվորեն առաջ մղվեց հայ-թուրքական հաշտեցման գործընթացը, որտեղ ամենաակտիվ ձևով ներգրավված էր ԱՄՆ-ը:

Բ. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նոր փուլը

Հայաստանի անկախության վերականգնումից հետո հայ-թուրքական հարաբերությունների անհեռանկարային կարգավորման մի քանի փորձեր նախկինում ևս եղել են: 2007 թ. շվեյցարական միջնորդությամբ սկսված փորձը հավանաբար կձախողվեր, եթե «հնգօրյա պատերազմից» հետո Հարավային Կովկասում չստեղծվեր միանգամայն նոր իրավիճակ, որին շատ արագ արձագանքեց Թուրքիան³: Տարածաշրջանում ձևավորված նոր իրողությունների և ռուս-ամերիկյան սրված աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խորհրդապահական գործընթացը ստացավ արտաքին դրսևորումներ և ձեռք բերեց ավելի մեծ նշանակություն:

Տարածաշրջանային հարաբերությունների կտրուկ փոխակերպումների համատեքստում 2008 թ. դարձավ հայ-թուրքական հարաբերությունների նոր փուլի սկզբնավորման տարի: Նախ 2008 թ. փետրվարին Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլլահ Գյուլը շնորհավորական ուղերձ

¹ Տե՛ս **Иванов В.**, Основные контуры турецко-грузинского военно-политического сотрудничества: динамика и перспективы развития // «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. 6, Երևան, 2009, էջ 158:

² Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմի գաղափարի մասին ավելի մանրամասն տե՛ս **Արշակյան Գ., Եղիազարյան Ա.**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը ԽՍՀՄ փլուզումից հետո, մաս առաջին, Երևան, 2014, էջ 167-171:

³ Տե՛ս **Թորոսյան Տ. Ս.**, Թուրքիայի արտաքին քաղաքականության «Նոր ակտիվիզմի» երկրորդ փուլը // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 2010, թիվ 1-2, էջ 8:

հղեց ՀՀ նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանին¹, որին հաջորդեց 2008 թ. հունիսի 25-ին Մոսկվայում Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի հայտարարությունը՝ հայ-թուրքական հարաբերությունները խթանելու ուղղությամբ նոր քայլեր ձեռնարկելու, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար Աբդուլլահ Գյուլին Երևան հրավիրելու մասին²: Ուղիղ մեկ ամիս անց՝ հուլիսի 24-ին, տեղի ունեցավ պաշտոնական հրավերը: Իսկ սեպտեմբերի 6-ին Ա. Գյուլը ժամանեց Երևան³: Այսպիսով, 2008 թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահի այցով հարաբերությունների կարգավորման համար սկսվեց երկխոսության նոր փուլ, որը հայտնի է «ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումով:

Հարկ է նշել, որ Ա. Գյուլի այցը Հայաստան լայն արձագանք ստացավ Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում: Մասնավորապես Թուրքիայի հանրապետական ժողովրդական կուսակցության առաջնորդ Դենիզ Բայքալը նախագահ Գյուլի և վարչապետ Էրդողանի գործողությունները Երևան այցի նախօրեին անվանել էր «դավաճանություն»։ «Այն, ինչ անում է Էրդողանի կառավարությունը, ցավալի է: Թող իմ աղբբեջանցի եղբայրներն իմանան, որ ագրեսիվ Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը թուրք ժողովրդի ցանկությունը չէ: Ես ներողություն եմ խնդրում իմ աղբբեջանցի եղբայրներից Գյուլի և Էրդողանի դավաճանության համար: Թուրք և աղբբեջանցի ժողովուրդները, ինչպես նաև ամբողջ թյուրքական աշխարհը երբեք չեն ների այդ դավաճանությունը: Ես կարծում եմ, որ թուրք ժողովուրդն իր միանշանակ գնահատականը պետք է տա Էրդողանի ու Գյուլի գործողություններին»⁴:

Բավականին ուշագրավ է թուրք հայտնի քաղաքական մեկնաբան, լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդի դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ: «Հյուրիյեթ» թերթի 2008 թ. սեպտեմբերի 5-ի համարում հրապարակված «Գյուլը, ֆուտբոլային հանդիպմանը գնալով, ճիշտ քայլ կատարեց» հրապարակման մեջ նա հավանություն էր տալիս Գյուլի՝ Հայաստանի նախագահի հրավերն ընդունելուն և Երևան մեկնելուն:

¹ Տե՛ս **Osipova Y, Bilgin F.**, Revisiting the Armenian-Turkish reconciliation // Rethink Paper 08, January 2013, Rethink Institute Washington, DC, p. 8.

² Տե՛ս **Գեղամյան Վ.**, Հայ-թուրքական հարաբերությունների 2008-2010 թթ. հետահայաց ամփոփում, 01.02.2011, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5338; **Iskandaryan A., Minasyan S.**, Pragmatic Policies vs. Historical Constraints: Analyzing Armenia Turkey Relations // Caucasus Institute Research Papers, 2010, n° 1, January, Yerevan, p. 9-10.

³ Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլլահ Գյուլի այցը Հայաստանի Հանրապետություն, 06.09.2008, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2008/09/06/news-21/>

⁴ “Последствия "футбольной дипломатии" могут оказаться неожиданными”, 03.09.08, www.echo-az.info; **Çelik M.**, Baykal’dan Gül’e Erivan tepkisi, 05.09.2008, <http://www.milliyet.com.tr/Siyaset/HaberDetay.aspx?aType=HaberDetay&Kategori=siyaset&KategoriID=&ArticleID=987062&Date=05.09.2008&b=Baykal,%20Gulu%20kizdirdi>

Բիրանդը մասնավորապես գրում էր. «Վստահ եղեք, որ ոչ միայն սիյուռքում ապրողները, այլև Հայաստանում բնակվող հայերի զգալի մի մասը հավատում են ցեղասպանությանը, և անհնար է փոխել նրանց համոզմունքն այս հարցում: Այսուհանդերձ, առանց փոխելու իրենց տեսակետները նրանք ցանկանում են հունի մեջ գցել հարաբերությունները Թուրքիայի հետ, բարձրացնել իրենց կյանքի որակը: Հայաստանում իշխանության եկած նոր ղեկավարությունն էլ ցանկանում է այս կամ այն ձևով կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ առանց ցեղասպանության գաղափարից հրաժարվելու, և Թուրքիայի միջոցով ավելի ազատորեն ինտեգրվել Եվրոպային ու կարգավորել տնտեսությունը»¹:

Հատկանշական է, որ սեպտեմբերի 7-ին վերադառնալով Երևանից Անկարա՝ Թուրքիայի նախագահը լրագրողներին ասել էր. «Գնդակը մեր դաշտում էր և չպետք է այնտեղ մնար: Այս այցով դրական նկարագիր ստեղծեցինք, դրական վարկանիշ ձեռք բերեցինք աշխարհում: Իմ այս այցը դրվատանքի է արժանանալու և դիտվելու է իբրև հանդգնության դրսևորում: Թուրքիայի համար անարդար է բացասական վարկանիշ ունենալը, իսկ ես մեծ կարևորություն եմ տալիս Թուրքիայի վարկանիշին»²:

Ըստ «Զաման» թերթի՝ դեռևս գտնվելով ինքնաթիռում, Ա. Գյուլը ջերմ վերաբերմունքի համար շնորհակալություն էր հայտնել Ս. Սարգսյանին և անդրադառնալով սահմանների բացման վերաբերյալ հարցին՝ ասել էր. «Եթե այս մթնոլորտը պահպանվի, ապա ամեն ինչ կմտնի հունի մեջ, կկարգավորվի, սակայն ներկա պահին նման հարց չկա»³:

Արդեն սկիզբ առած գործընթացներն իրենց գազաթնակետին հասան 2009 թ.: Նախ տարվա սկզբին Հայաստան ժամանեցին մի շարք թուրք քաղաքական գործիչներ և լրագրողներ, այդ թվում՝ Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը՝ մասնակցելու 2009 թ. ապրիլի 16-17-ը Երևանում անցկացված Մեծովյան տնտեսական համագործակցության (ՄՕՏՀ) կազմակերպության անդամ երկրների արտաքին գերատեսչությունների ղեկավարների հանդիպմանը, որի ժամանակ քննարկվում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հեռանկարները: Մի քանի օր անց՝ ապրիլի 22-ին, ՀՀ և Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունները Շվեյցարիայի արտաքին գործերի դեպարտամենտի միջնորդությամբ կնքում են հայ-թուր-

¹ **Birand M. A.**, Gül, maça gitmekle doğru adım attı..., 05.09.2008, <http://www.hurriyet.com.tr/yazarlar/9824710.asp>.

² Gül'ün Erivan ziyareti dünya basınında, 07.09.2008, <http://www.cnnturk.com/2008/dunya/09/07/gulun.erivan.ziyareti.dunya.basininda/492734.0/index.html>.

³ Gül: Ziyaretim faydalı geçti, 07.09.2008, http://www.zaman.com.tr/politika_gul-ziyaretim-faydaligecegi_735261.html

քական հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզ»¹: Այս ընթացքում հայ-թուրքական բանակցություններն ուղեկցվում էին թե՛ թանավեճերով և հասարակական քննարկումներով ինչպես Հայաստանում և Սփյուռքում, այնպես էլ Թուրքիայում:

«Ճանապարհային քարտեզի» կնքումից շատ չանցած՝ կարևոր փոփոխություն տեղի ունենցավ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունում: Մայիսի 1-ին ԱԳ նոր նախարար է դառնում Ա. Դավութօղլուն, ով մինչ այդ Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդոհանի գլխավոր խորհրդականն էր արտաքին հարցերի գծով²: Նախարարի փոփոխությունը համընկավ ամառային քաղաքական շրջանի հետ, ինչը գործնականում լուր բանակցություններ վարելու հնարավորություն տվեց, որոնց արդյունքը երկար սպասել չտվեց: 2009 թ. օգոստոսի 31-ի երեկոյան Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիան նախաստորագրում են «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները³: Այս քայլը խթանեց տեղական և միջազգային ձևաչափերով հասարակական քննարկումների ակտիվացումը և Հայաստանի ու Սփյուռքի քաղաքական, հասարակական ուժերի կողմից կարգավորման փաստաթղթերում ձևակերպումների դեմ ցույցեր նախաձեռնելու առիթ տվեց: Թուրքիայի ազգայնական հատվածը և աղբյուրազանական կողմը ևս խստացրին արձանագրությունների դեմ ուղղված իրանց հռետորաբանությունը:

2009 թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ-ի և Թուրքիայի արտգործնախարարներ Է. Նալբանդյանը և Ա. Դավութօղլուն ստորագրեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և ՀՀ-ի ու Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունները⁴: Այսպիսով, ԱՄՆ պետական քարտուղար Հ. Բլինթոնի, Ֆրանսիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Բ. Քուշների և ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի՝ երեք երկրների հովանավորությունը խորհրդանշող անմիջական ներկայությամբ անցած ստորագրության արարողությունը նշանավորեց Շվեյցարիայի Համադաշնության արտաքին

¹ Տե՛ս **Torosyan T.**, The Return of Turkey. Ankara in the South Caucasus after the Russian-Georgian War // *Russia in Global Affairs*, Vol. 7, 2009, n° 3, July-September, p. 127; **Shiriyev Z.**, and **Davies C.**, նշվ. աշխ., էջ 192:

² Ավելի մանրամասն տե՛ս **Aras B.**, The Davutoğlu Era in Turkish Foreign Policy,- *Insight Turkey*, Vol. 11, n° 3, 2009, p. 127.

³ Տե՛ս **Phillips L D.**, *Diplomatic History: The Turkey-Armenia Protocols*, (New York: Columbia University, Institute for the Study of Human Rights, 2012) p. 55; Full text of the protocols signed by Turkey and Armenia, 04.09.2009, <http://www.turkishweekly.net/2009/09/04/news/full-text-of-the-protocols-signed-by-turkey-and-armenia/>; **Iskandaryan A., Minasyan S.**, նշվ. աշխ., էջ 12:

⁴ Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol.pdf, Արձանագրություն ՀՀ և ԹՀ միջև հարաբերությունների զարգացման մասին, http://www.mfa.am/u_files/20091013_protocol1.pdf

գործերի նախարարության միջնորդությամբ ընթացած հայ-թուրքական դիվանագիտական բանակցությունների ավարտը:

Ցյուրիխյան արարողությունից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 14-ին, Բուրսայում տեղի ունեցավ Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը, որին ներկա էին նաև Հայաստանի և Թուրքիայի նախագահները¹:

Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիայի Ազգային մեծ ժողովում տեղի ունեցան լսումներ, որոնց ընթացքում, ինչպես և սպասվում էր, բուռն քննարկումներ տեղի ունեցան, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության հարցի կապակցությամբ: Այսպես, 2009 թ. հոկտեմբերի 21-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստում բավական հետաքրքիր էր քրդական «Ժողովրդավարական հասարակություն» ընդդիմադիր կուսակցության պատգամավոր Մելահեթթին Դեմիրթաշի ելույթը, որը հայտնում էր իր կուսակցության տեսակետները: Խորհրդարանի ամբիոնից նա կատարեց մի շարք ուշագրավ հայտարարություններ՝ արժանանալով իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության, ինչպես նաև «Ժողովրդավարական հասարակություն» և «Աշխատավորական շարժում» կուսակցությունների կոշտ քննադատությանը: Ըստ Դեմիրթաշի՝ «հայ-թուրքական հարաբերություններում կա հարյուր տարվա վաղեմության մի պատմական խնդիր: 1915-1916 թթ. այդ ժամանակվա երիտթուրք վարչախմբի կողմից Անատոլիան թուրքացնելու, իսլամացնելու նպատակով պարբերաբար կիրառվել է ոչ մուսուլմանների ոչնչացման քաղաքականություն... Այդ ժամանակ հայ ժողովրդի հանդեպ կիրառվածներն ընդհանրապես տեղ չեն գտել պատմության գրքերում, կրթության նախարարության հրատարակած դասագրքերում, ասես դրանք տեղի չեն ունեցել»²:

Արձանագրությունների վավերացման հարցում հայկական կողմի դիրքորոշումն այն էր, որ դրանք առաջինը պետք է վավերացնի Թուրքիայի խորհրդարանը կամ երկու խորհրդարանները միաժամանակ: Սակայն ադրբեջանական աճող ճնշումների և Թուրքիայի ներսում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության հանդեպ ընդդիմադիր ուժերի հարձակումների պատճառով Թուրքիայի քաղաքական ղեկավարներն առաջ էին տանում այն գիծը, որ Թուրքիայի խորհրդարանն ինքնուրույն քաղաքական մարմին է, որտեղ յուրաքանչյուր պատգամավոր ունի իր սեփական քաղաքական դիրքորոշումը: Ավելին, 2009 թ. հոկտեմբերի 15-ին Եվրամիության անդամակցության հարցերով Թուրքիայի բանագնաց Էզեմեն Բաղըշը հայ

¹ Տե՛ս **Watson I.**, Armenian leader in Turkey for ‘soccer diplomacy’, 14.10.2009, <http://edition.cnn.com/2009/WORLD/europe/10/14/turkey.armenia.soccer.diplomacy/>; Նախագահ Մերժ Սարգսյանի աշխատանքային այցը Բուրսա (Թուրքիայի Հանրապետություն); 14.10.2009, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2009/10/14/news-74/>.

² **Մելքոնյան Ռ.**, Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6144:

լրագրողների հետ զրույցում ասել էր. «Շատ բարդ կլինի Թուրքիայի խորհրդարանից ակնկալել հայ-թուրքական երկու արձանագրությունների վավերացումը, քանի դեռ Ղարաբաղի հարցում չկա նկատելի առաջընթաց»¹:

Թուրք-հայկական հարաբերությունների կարգավորման հարցում նախապայմաններ առաջադրելու առաջարկներին պահպանողական դիրքորոշում դրսևորեցին հիմնահարցով զբաղվող թուրք վերլուծաբանները: Հայաստանի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորումը հետևողականորեն մերժելու ջատագով էր Թուրքիայի Չանաքքալե քաղաքի «Սարտի 18» անունը կրող համալսարանի ռեկտոր, հակահայկական հայացքներով աչքի ընկնող թուրք փորձագետ Ս. Լաչիների «Հայաստանը կարող է ճանաչել Թուրքիայի սահմանները» հրապարակումը, որտեղ «սահմանվում» էր «այն գիներ», որը Հայաստանը պետք է վճարեր Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհները բացելու համար: Նա պնդում էր, որ Հայաստանի ղեկավարները պետք է հստակ հայտարարեն Թուրքիայի հետ առկա պետական սահմանի ճանաչման մասին: Ընդ որում, հեղինակը դա համարում էր միանգամայն հնարավոր՝ ելնելով հայկական պատասխանատուների հավաստիացումներից: Իսկ դրանից հետո ճանապարհների վերաբացման համար ժամանակ է պետք, որի ընթացքում Հայաստանը պետք է կատարի այլ քայլեր, մասնավորապես՝ իր գործերը դուրս բերի «ռազմակալված տարածքներից»²:

Գ. Հայ-թուրքական հաշտեցման գործընթացը և ադրբեջանական գործոնը

2008 թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահի՝ Հայաստան այցով սկիզբ առած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նոր փուլը մեծ դժգոհություն առաջացրեց Ադրբեջանում և իր անդրադարձը ունեցավ թուրք-ադրբեջանական հարաբերությունների վրա:

Ադրբեջանական կողմը ՀՀ-ի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման որոշակի վտանգներ էր տեսնում: Ադրբեջանը այս գործընթացը համարում էր Անկարայի և Բաքվի միջև հիմնված համագործակցության առանցքային սկզբունքներին դավաճանություն՝ վախենալով, որ սահմանները բացելու և Հայաստանը մեկուսացումից հանելու դեպքում ինքը կկորցնի կարևոր լծակներ՝ ազդելու Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի շուրջ ընթացող բանակցությունների վրա³:

¹ Bağış, Ermenistan'dan gelen gazetecileri kabul etti, 15.10.2009, <http://egemenbagis.com/tr/1123>.

² Տե՛ս **Laçiner S.**, Ermenistan, Türkiye'nin Sınırlarını Tanıyabilir, http://www.usak.org.tr/analiz_det.php?id=1&cat=365365889#.VTtRrvl_sbY; **Laçiner S.**, Ermenistan-Türkiye İlişkilerinde Sınır Kapısı Sorunu ve Ekonomik Boyut, <http://www.eraren.org/index.php?Page=Dergilerik&IcerikNo=154>.

³ Տե՛ս **Mikhelidze N.**, The Turkish-Armenian Rapprochement at the Deadlock // Istituto Affari Internazionali, March 2010 p. 4.

Լարվածությունը խորացավ հատկապես Ցյուրիխում արձանագրությունների ստորագրումից հետո: Մասնավորապես, Ադրբեջանի ԱԳ նախարարության տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ Թուրքիայի որոշումը «անմիջականորեն հակասում է Ադրբեջանի ազգային շահերին, և խաթարում է Ադրբեջանի և Թուրքիայի միջև խորը պատմական արմատների հիման վրա կառուցած եղբայրական հարաբերությունների ոգին»¹:

Թուրք-ադրբեջանական լարվածությունը լուրջ անդադարձ ունեցավ նաև էներգետիկ բնագավառում: Մինչ ՀՀ-ի նախագահ Ս. Սարգսյանը մեկնում էր Բուրսա՝ Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպմանը ներկա գտնվելու համար, Ադրբեջանի նավթային ընկերությունը պայմանագիր կնքեց ռուսական «Գազպրոմի» հետ²:

Պայմանագիր կնքելուց երկու օր անց Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը, խիստ բացասական արձագանքելով հայ-թուրքական հաշտեցման գործընթացին, հրապարակայնորեն խոսեց Թուրքիա արտահանվող գազի գների բարձրացման անհրաժեշտության, ինչպես նաև արտահանվող գազի տարանցիկ բարձր սակագների մասին³: Նա զգուշացրեց, որ եթե Թուրքիան շարունակի այս քաղաքականությունը, Ադրբեջանն իր ամբողջ գազը կարտահանի ՌԴ⁴: Ավելի ուշ Ադրբեջանն իրականացրեց իր սպառնալիքները՝ կրկնակի ավելացնելով ՌԴ արտահանվող գազի ծավալները, և պայմանագիր կնքեց Թեհրանի հետ՝ պարտավորվելով գազ արտահանել նաև Իրան⁵:

Ադրբեջանի հետ առաջացած լարվածությունը մեղմելուն էր ուղղված Ցյուրիխի արարողությունից անմիջապես հետո Ա. Դավութջյանի հայտարարությունն այն մասին, որ «Ադրբեջանի հողը սուրբ է մեզ համար, ինչպես մեր սեփականը, և այս հողը ռազմակալումից ազատագրելը մեր առաջնային ազգային հարցերից մեկն է: Նույնիսկ եթե աշխարհը փուլ գա, Թուրքիան իր դիրքորոշումը չի փոխի»⁶: ԼՂ հիմնահարցին և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրին էր անդադարձել նաև Թուրքիայի

¹ Statement of the Ministry of Foreign Affairs of the Republic of Azerbaijan, 12.10.2009, http://www.aaainc.org/fileadmin/aaainc/pdf_1/Protocols/2009__Oct_12__AZ-MFA_Stmt_on_signing_of_A-T_protocols.pdf.

² Алиев: Азербайджан Турции продавать газ дешево не будет, 19.10.2009, <http://www.kavkaz-uzel.ru/articles/160851/>

³ Phillips L D., նշվ. աշխ., էջ 62:

⁴ Տե՛ս Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը, էջ 108:

⁵ Ավելի մանրամասն տե՛ս Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականության առաջնահերթություններն Անդրկովկասում 2008-2011 թթ. և թուրք-ադրբեջանական հարաբերությունները // «21-րդ դար», 2013, թիվ 1 (47), էջ 57-77:

⁶ Azerbaijan Threatens Turkey Over Armenia Agreement, Radio Free Europe/Radio Liberty, 21.10.2009, http://www.rferl.org/content/Azerbaijan_Threatens_Turkey_Over_Armenia_Agreement/1857198.html.

վարչապետ Ռ. Թ. Էրդոդանը 2009 թ. դեկտեմբերին ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ հանդիպման ժամանակ՝ նշելով. «Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները մեծ նշանակություն ունեն թուրք-հայկական հարաբերությունների համատեքստում: Ես կարող եմ ասել, որ դարաբաղյան հակամարտությունում առաջընթացը մեծ խթան և շատ դրական ազդեցություն կարող է ունենալ ընդհանուր գործընթացի վրա, քանի որ Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը մեծապես կապված է այս հարցերի հետ»¹:

Այսպիսով, Ռ. Թ. Էրդոդանի կառավարությունը լուրջ խնդիրներ ունեցավ Ադրբեջանի հետ: Բացի դրանից, Ի. Ալիևը հրապարակավ դժգոհություն հայտնեց, որ ծրագրելով բացել ՀՀ-ի հետ սահմանը՝ Թուրքիան հրաժարվում է «փոքր եղբորից»՝ վերացնելով այն հիմնական դրոպապատճառը, որը կստիպեր ՀՀ-ին զիջումների դիմել: Ադրբեջանական իշխանությունը չբավարարվեց թուրքական հավաստիացումներով և պատասխան քայլեր ձեռնարկեց՝ եռապատկելով Թուրքիա արտահանվող գազի գինը, հանելով թուրքական դրոշները հասարակական վայրերից, արգելելով թուրքական ֆիլմերն ու երգերն ադրբեջանական հեռուստաալիքներում և փակելով թուրքական ֆինանսավորմամբ գործող մզկիթները Բաքվում²:

Այդ ընթացքում Թուրքիայի ընդդիմադիր ուժերը, հիանալի առիթ տեսնելով վարչապետ Ռ. Թ. Էրդոդանի խորհրդարանական մեծամասնությունը նվազեցնելու համար, նրան մեղադրեցին Թուրքիայի ազգային շահերին դավաճանելու մեջ՝ իրենց դարավոր հայ թշնամիների և ոչ թե ադրբեջանցի եղբայրների կողմը բռնելու համար³: Այս մեղադրանքների դեմ պայքարելու նպատակով Թուրքիայի ղեկավար շրջանակները ադրբեջանցիներին հավաստիացրին, որ ճնշում կգործադրեն ՀՀ-ի վրա Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանին վերադարձնելու համար՝ մինչև թուրքական խորհրդարանի կողմից արձանագրությունների վավերացումն ու ՀՀ-ի հետ հարաբերությունների կարգավորումը:

Տարածաշրջանային զարգացումների համատեքստում բավական ուշագրավ էր թուրքական մի շարք լրատվամիջոցների տարածած լուրը, թե ՀՀ-ն դուրս է հանվել Թուրքիայի «կարմիր գրքից» կամ նրա անվտանգության հայեցակարգի թշնամի երկրների շարքից: Իբր այդ փաստաթուղթը խիստ գաղտնի է, հրապարակման ոչ ենթակա: Իսկ այդ փաստաթղթում փոփոխությունների մասին տեղեկությունները հիմնականում արտահոսքի տեսքով են

¹ Remarks by President Obama and Prime Minister Erdogan of Turkey after meeting, White House press-release, 07.12.2009, <http://www.whitehouse.gov/the-press-office/remarks-president-obama-and-primeminister-erdogan-turkey-after-meeting>.

² **Ibrahimov R.**, Turkish-Armenian Rapprochement: Defining the Process and Its Impact on Relations Between Azerbaijan and Turkey // Caspian Report, Issue 06, Winter 2014, p. 91.

³ Տե՛ս **Արշակյան Գ., Եղիազարյան Ա.**, Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը, էջ 113:

և հաստատապես ունեն կոնկրետ նպատակ ու խնդիր: Ըստ թուրքական աղբյուրների՝ այն վերանայվում է հինգ տարին մեկ¹:

Այս պայմաններում ավելի ուշագրավ է դառնում ցանկացած գաղտնագերծում, հատկապես երբ խոսքն այնպիսի քաղաքական միակողմանի անակնկալների մասին է, ինչպիսիք Թուրքիան մատուցեց ՀՀ-ին ու ՌԴ-ին, Իսրայելին, Իրանին ու Իրաքին, Հունաստանին ու Սիրիային և վերջապես՝ Ադրբեջանին: Այսպես, այս նոր փաստաթղթում Վրաստանը ՀՀ-ի և մի շարք այլ երկրների նման դուրս է եկել Թուրքիայի անվտանգությանը սպառնացող երկրների ցանկից:

Էլ ավելի բարդ և հակասական իրավիճակում կարող է հայտնվել Թուրքիայի նոր ռազմավարությունը թուրք-ադրբեջանա-հայկական հարաբերությունների համատեքստում: Ստացվում է, որ ՀՀ-ն թշնամի երկրների ցանկից հանելով՝ Թուրքիան ազդարարում է հայ-թուրքական կարգավորման գործում իր պատրաստակամությունը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության գլխավոր առաջնահերթություններից մեկը՝ տարածաշրջանի պետություններն իրեն կենսական կապերով ամրապնդելը, անհաջողության մատնվեց Ադրբեջանի «պահանջով», որի հետևանքով տարածաշրջանային տերությանը հատուկ «զրո խնդիրներ հարևանների հետ» արտաքին քաղաքական սկզբունքով առաջնորդվել փորձող, սակայն Ադրբեջանի դրդմամբ ՀՀ-ի հետ «առանձնահատուկ» հարաբերություններ որդեգրած և ըստ այդմ տարածաշրջանային տերության կարգավիճակից «հրաժարված» Թուրքիան, գլոբալ ասպարեզում տերության շահերը մի կողմ թողած, ներկայումս հանդես է գալիս ադրբեջանական շահերի պաշտպանությամբ:

¹ New edition of Turkish Red Book shapes new security spheres, Hürriyet Daily News, 28.10.2010, <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=red-book8217s-new-edition-shapes-new-security-spheres-2010-10-28>; Cohen A., Turkey's New Threat Assessment: A Challenge for Washington, 02.11.2010, <http://blog.heritage.org/2010/11/02/turkey%E2%80%99s-new-threat-assessment-a-challenge-for-washington/>; Совбез Турции одобрил новую стратегию национальной безопасности, 01.11.2010, <http://www.elections-ices.org/russian/news/textid:7851/>.

Դ. Արձանագրությունների վավերացման գործընթացը և դրա արձագանքները Թուրքիայում ու Հայաստանում

2010 թ. նշանավորվեց մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք մեծ ազդեցություն թողեցին հայ-թուրքական հարաբերությունների վրա: Նախ՝ հունվարի 12-ին ՀՀ Սահմանադրական դատարանը հաստատում է արձանագրությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը՝ որոշման նախաբանում հայտարարելով, որ արձանագրությունները չեն կարող մեկնաբանվել այնպես, որ հակասի Հայաստանի անկախության հռչակագրի 11-րդ հոդվածին, որտեղ նշվում է, որ Հայաստանը աջակցում է Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում 1915 թ. տեղի ունեցած ցեղասպանության միջազգային ճանաչմանը¹: Փաստորեն, որոշումը հիմնված էր երկակի մոտեցման վրա. մի կողմից հաստատում էր Արձանագրությունների սահմանադրականությունը, մյուս կողմից՝ սահմանափակում դրանց կիրառումը Ցեղասպանության և հայ-թուրքական առկա սահմանի ճանաչման վերաբերյալ:

Թուրքիայի արձագանքը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմանը խիստ էր: Թուրքիայի արգործնախարարության տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ «Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշումը վտանգում է այդ արձանագրությունների շուրջ ընթացող բանակցությունների բուն իմաստը, ինչպես նաև դրանց հիմնարար նպատակը: Այդ մոտեցումը չի կարող ընդունելի լինել թուրքական կողմի համար»³: Այսպիսով Թուրքիան փորձեց այս հակասությունն օգտագործել՝ վավերացման պատասխանատվությունը վերագրելով Հայաստանին, և պահանջեց վերանայել ՄԴ որոշումը, թեև, ըստ ՀՀ Սահմանադրության, ՄԴ որոշումները վերջնական են և վերանայման ենթակա չեն:

¹ Ավելի մանրամասն տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 12.01.2010, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-850.pdf>.

² Տե՛ս **Թորոսյան Տ.**, Սահմանադրական դատարանի ամանորեայ նւերը («Նոր Հառաջ», Փարիզ, 2010, 29 հունվարի, 2 փետրվարի):

³ **Ավետիսյան Տ.**, Թուրքիան նախապայմաններ է տեսնում Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշման մեջ, 19.01.2010, <http://www.azatutyun.am/content/article/1933694.html>; Turkey Reacts to Armenian Constitutional Court's Decision on Protocols,- Jamestown Eurasia Monitor, Vol. 7, Issue 17, 26.01.2010, http://www.jamestown.org/single/?tx_ttnews%5Btt_news%5D=35954&no_cache=1#.Vo-WOLZ97cs.

Սահմանադրական դատարանի որոշումից հետո՝ փետրվարի 12-ին, արձանագրությունները ուղարկվեցին Ազգային ժողով՝ վավերացման: Հայ-թուրքական երկու արձանագրությունների՝ Թուրքիայի և Հայաստանի խորհրդարաններ մտնելուց անմիջապես հետո թե՛ Թուրքիայում և թե՛ Հայաստանում սկսեց քննարկվել դրանց վավերացման հնարավորությունը¹:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովում մեծամասնություն կազմող «Արդարություն և զարգացում» կուսակցության տարբեր քաղաքական գործիչներ, ի պատասխան ազգայնական ընդդիմության հարձակումների, սկսեցին հայտարարել, որ Հայաստանին պայման են ներկայացնելու, որն ըստ երևույթին վավերացման ժամանակ պետք է բովանդակեր վերապահում, վերաբերելու էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության գործընթացում Հայաստանից զիջումներ կորզելուն: Ըստ Սեդաթ Լաչիների՝ վերապահումը ըստ երևույթին, թուրքական խորհրդարանում ձևակերպվելու էր այնպես, որ Թուրքիան կվավերացնի երկու արձանագրությունները, սակայն դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը կգործարկի և թուրք-հայկական սահմանը կվերաբացի Հայաստանի կողմից Ադրբեյջանի նկատմամբ որոշակի զիջումների դեպքում միայն²:

Այս դիրքորոշումը թուրքական հասարակական-քաղաքական կարծիքում բյուրեղացավ և առարկայական բովանդակություն ստացավ թուրք-հայկական երկխոսության ծավալման կապակցությամբ թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում սկսված քննարկումների արդյունքում:

Այս համատեքստում ուշագրավ են Թուրքիայի արտգործնախարարության Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Բյուլենթ Արասի դիտարկումները հայ-թուրքական աշխուժացած շփումների վերաբերյալ: Ըստ նրա՝ «թուրքական քաղաքական գործիչների շրջանում նկատվում է Հայաստանի հանդեպ վերաբերմունքի էական փափկացում... 2008 թ. դեկտեմբերին թուրքական մտավորականության ներկայացուցիչների 200-հոգանոց խումբը նամակ հրապարակեց՝ ներողություն խնդրելով Մեծ Ադեռի համար, որին ենթարկվել են Օսմանյան կայսրության հայերը 1915 թ.»³: Թուրքիայի նախագահ Ա. Գյուլն այդ նամակի հրապարակումն ընկալեց իբրև բացված հնարավորություն՝ երկրում սկսելու բանավեճ թուրքական պատմության այդ էջի շուրջ: Թուրքական ԱԳՆ հայտարարությունը նման էր Գյուլի արձագանքին, և ընդգծվում էր այլընտրանքային կարծիքների

¹ Տե՛ս **Mercan M.**, “Protokolün kilit noktası”, 15.01.2010, http://www.cumhuriyet.com.tr/haber/diger/112864/Protokolun_kilit_noktasi_Azerbaycan_.html

² Տե՛ս **Laciner S.**, Bir Ermeni Tasarısı Hiç Bu Kadar İşe Yaramamıştı, 10.03.2010, <http://www.usak.org.tr/print.php?id=1135&z=2>

³ Տե՛ս **Арас Б.**, Турция и Южный Кавказ в 2008 г./ КАВКАЗ-2008. Ежегодник Института Кавказа. – Ереван, Институт Кавказа, 2010, с. 169:

հնարավորությունը ժողովրդավարական հասարակության մեջ: Չնայած վարչապետ Ռ. Թ. Էրդողանը այդ հայտարարությանը քննադատաբար վերաբերվեց, և այն ազգայնական շրջանակների կողմից սուր քննադատության ենթարկվեց, այնուամենայնիվ նախկինում տաբու եղած հայկական թեման շոշափվեց, և պարզ դարձավ, որ Թուրքիայում փոխվում է վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ»¹:

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության համատեքստում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին էր անդրադարձել նաև TESEV-ի (Թուրքիայի տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամ) տնօրեն Այբարս Գորգուլուն՝ նշելով, որ Հարավային Կովկասը եղել է Թուրքիայի արտաքին քաղաքական նախապատվությունների շարքում՝ մասնավորապես Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու փորձերի տեսանկյունից: Այս հանգամանքը, նրա կարծիքով, պատմական կարևորության նախագիծ էր, որը 2008-2010 թթ. մնում էր որպես կովկասյան ուղղությամբ Թուրքիայի հիմնական նախապատվություն: Նախ և առաջ Ադրբեջանի, այնուհետև Վրաստանի հետ հարաբերությունների զարգացումից հետո նրա տարածաշրջանային քաղաքականության երրորդ բաղադրիչը համարվել է Հայաստանի հետ հարաբերությունները: Անվանելով այդ հարաբերությունների պատմությունը «հավերժական փակուղի»՝ Ա. Գորգուլուն նշում է, որ այդ փակուղուց ելնելու ամենակարևոր քայլն արվեց, երբ Թուրքիան և Հայաստանը ստորագրեցին Ցյուրիխյան արձանագրությունները, սակայն այնուհետև չվավերացվեցին, «որովհետև 2010 թ. ապրիլին հայկական ղեկավարությունը հայտարարեց դրանց վավերացումը սառեցնելու մասին»²:

Հատկանշական է, որ վերլուծելով արձանագրությունների ստորագրմանը հաջորդած գործընթացները Հայաստանում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թ. հունվարի 12-ի որոշումը, Ա. Գորգուլուն նշել էր, որ ըստ թուրքական կողմի՝ նման մեկնաբանությունը, փաստորեն, ձախողում է պատմաբանների ենթահանձնաժողովի ստեղծման հիմքը, ինչը թուրքական մեկնաբանությամբ պետք է որ հանձնարարվեր այդ ենթահանձնաժողովին 1915 թ. իրադարձություններն ուսումնասիրելու նպատակով: Ըստ նրա՝ թուրքական պաշտոնյաներից շատերը Սահմանադրական դատարանի եզրակացության որոշ դրույթներ մեկնաբանում էին իբրև Հայաստանի Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև 1921 թ. Կարսի պայմանագիրը ճանաչելու ցանկության բացակայություն³:

¹ Նույն տեղում, էջ 174-175:

² **Горгулу А.**, Турция и Южный Кавказ в 2010 г./ КАВКАЗ-2010. Ежегодник Института Кавказа– Ереван, Институт Кавказа, 2012, с. 144.

³ Տե՛ս նույն տեղում, էջ 148-149: Տե՛ս նաև **Gorgulu A., Iskandaryan A. and Minasyan S.**, Turkey-Armenia Dialogue Series: Assessing the Rapprochement Process. TESEV Foreign Policy Analysis Series. – Istanbul: TESEV Publications, 2010, p.18:

Այսպիսով ակնհայտ է նաև, որ Ցյուրիխյան արձանագրությունների վավերացումը նախապայմաններով (վերապահումներով) պայմանավորելու քաղաքականությանը զուգահեռ՝ թուրքական կողմը խորամանկորեն առաջ էր մղում այն թեզը, թե արձանագրությունների վավերացումը կասեցնելու և կարգավորման գործընթացը սառեցնելու նախաձեռնողը ոչ թե Թուրքիան է, այլ Հայաստանը:

Անդրադառնալով Հայաստանում արձանագրությունների վավերացման շուրջ ընթացող գործընթացին՝ հարկ է նշել, որ դեռևս 2009 թ. այստեղ ձևավորվել էր մի տեսակետ, ըստ որի՝ հարկ էր սպասել թուրքական խորհրդարանում փաստաթղթերի վավերացմանը, դրանից հետո միայն դրանք մտցնել ՀՀ ԱԺ օրակարգ: ՀՅԴ-ն հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ վճռակա-նություն էր արտահայտում՝ ձախողել արձանագրությունների վավերացումը սահմանադրական բոլոր միջոցներով¹:

Արձանագրությունների վավերացման ամենաէական խոչընդոտը թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում հստակ հնչած պահանջն էր հայկական կողմերին՝ միակողմանի զիջումների դիմել Արցախյան հակամարտության կարգավորման հարցում: Զիջումների հնարավորության, ավելի ստույգ՝ անհնարինության հարցում Հայաստանում ձևավորված միակամության արտահայտությունն էր 2010 թ. ապրիլի 22-ին ՀՀ Ազգային ժողովում քաղաքական կռախիցիա կազմած կուսակցությունների քաղաքական խորհուրդների համատեղ հայտարարությունը²: Մեր կարծիքով, Հայաստանի խորհրդարանում վավերացման հակառակորդների դիրքորոշումները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. ա) հայ-թուրքական արձանագրությունները պարունակում են թաքնված նախապայմաններ, մասնավորապես՝ թուրքական կողմն ակնկալում է ճանաչել տալ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, ինչը հաջողություն է Թուրքիայի համար, բայց չի բխում հայության շահերից, բ) արձանագրությունները «սողանք» են թողնում ԼՂ հիմնախնդրում Թուրքիայի ներգրավվածության մեծացման համար՝ բարդացնելով դրությունը:

Ըստ Տ. Թորոպյանի՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը Թուրքիայի համար արդյունավետ միջոց է եղել հետևյալ նպատակներին հասնելու համար.

1. ցեղասպանության ճանաչման գործընթացի սառեցում,
2. ԱՄՆ նորընտիր նախագահի առաջին ապրիլքսանչորսյան ուղերձում «ցեղասպանություն» բառի օգտագործման արգելափակում,

¹ ՀՅԴ-ն տարածել է հաղորդագրություն հայ-թուրքական ստորագրված արձանագրությունների վերաբերյալ, «Անկախ», 12.10.2009:

² ՀՀ Ազգային ժողովում քաղաքական կռախիցիա կազմած կուսակցությունների քաղաքական խորհուրդների համատեղ հայտարարությունը, 22.04.2010, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=3890&year=2010&month=04&day=22&lang=arm.

3. Հայաստանի իշխանությունների ու Սփյուռքի միջև աննախադեպ լարվածություն Ցեղասպանության հարցում,
4. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ժամանակավոր անդամություն,
5. աննախադեպ կարևոր դերակատարություն տարածաշրջանում,
6. Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Եվրամիության հետ հարաբերությունների էական բարելավում:

Ընդ որում, այս ամենին Թուրքիան հասել է առանց որևէ քայլ ընկրկելու՝ սուկ հերթապահ հայտարարություններ անելով հարաբերությունների կարգավորման մասին և դրանք զուգակցելով բարձրաստիճան պաշտոնյաների փոխլրացնող դիրքորոշումներին հարաբերությունների կարգավորման նախապայմանների վերաբերյալ¹:

Մինևույն ժամանակ շարունակվում էր միջազգային ճնշումը երկու կողմերի (հատկապես Թուրքիայի) վրա՝ հնարավորինս արագացնելու կարգավորման գործընթացը: Դրա վառ դրսևորումը կարելի է համարել Հայոց ցեղասպանությունը դատապարտող երկու որոշումների ընդունումը մարտի սկզբին՝ մեկ շաբաթվա տարբերությամբ: Նախ 2010 թ. մարտի 4-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչում և դատապարտում է ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը (և որոշում հարցը մտցնել Կոնգրեսի ընդհանուր օրակարգ)², իսկ մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանը ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև³: Հաշվի առնելով ստեղծված պայմանները՝ Թուրքիան սկսեց իրավիճակից դուրս գալու ջանքեր գործադրել: Այս նպատակով ապրիլի 7-ին Երևան է ժամանում Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդոհանի հատուկ բանագնացը՝ Թուրքիայի փոխարտգործնախարար Ֆ. Մինիրլիօղլուն, ով նախագահ Ս. Սարգսյանին է փոխանցում Թուրքիայի վարչապետի նամակը, որով վերջինս Վաշինգտոնում կայանալիք Միջուկային անվտանգության գագաթնաժողովի շրջանակներում հանդիպում է խնդրում ՀՀ նախագահից⁴:

2010 թ. ապրիլի 12-ին Վաշինգտոնում ՀՀ և ԱՄՆ նախագահների հանդիպման ժամանակ կողմերը մասնավորապես անդրադարձել էին Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման ընթացքին,

¹ Տե՛ս **Թորոսյան Տ.**, Հարավային Կովկասը օգոստոսյան պատերազմից հետո. Լեռնային Ղարաբաղի հակամարտություն, հայ-թուրքական հարաբերություններ, Երևան, 2009, էջ 52:

² Տե՛ս **Knowlton B.**, House Panel Says Armenian Deaths Were Genocide, 04.03.2010, http://www.nytimes.com/2010/03/05/world/europe/05armenia.html?_r=0.

Text of Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution, March 4, 2010, <https://www.govtrack.us/congress/bills/111/hres252/text>.

³ Տե՛ս **Zeldin W.**, Sweden: Parliament Approves Resolution on Armenian Genocide, 16.03.2010, <http://www.loc.gov/law/foreign-news/article/sweden-parliament-approves-resolution-on-armenian-genocide/>;

Քոչարյան Վ., Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, Երևան, 2014, էջ 47-48:

⁴ Yerevan hosts Turkish Special Envoy, 10.04.2010, http://www.peacedialogue.am/english/news_more.php?SID=1&AID=267&TopicId=1&Language=Eng

մտքեր էին փոխանակել տարածաշրջանային զարգացումների ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ: Նույն օրը նախագահ Ս. Սարգսյանը Վաշինգտոնում հանդիպել էր նաև Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի հետ¹:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այս հանդիպումը չօգնեց հաղթահարելու բանակցություններում առկա խոչընդոտները: Ամիսներ շարունակ Թուրքիան վարում էր քաղաքականություն, որը հակասում էր բանակցությունների «առանց նախապայմանների» ձևաչափին և անընդունելի էր Հայաստանի համար՝ հայ-թուրքական գործընթացը Արցախյան հիմնախնդրի հետ կապելու առումով: Ստեղծված իրավիճակը հանգուցալուծում ստացավ 2010 թ. ապրիլի 24-ի նախօրյակին. ապրիլի 22-ին Հայաստանի իշխող կոալիցիան նախ որոշում կայացրեց ՀՀ Ազգային ժողովում արձանագրությունների վավերացման ընթացքը առկախելու մասին, ինչը նշանակում էր գործընթացի սառեցում²: Նույն օրը հետևում է Ս. Սարգսյանի հայտարարությունը ՀՀ կողմից արձանագրությունների վավերացումը կասեցնելու մասին: Այդ մասին ծանուցումն ուղարկվում է Թուրքիայի Հանրապետություն³: Այսպիսով վավարտվում է մոտ երկու տարի առաջ սկսված դիվանագիտական հարաբերությունների վերականգնման փորձի ևս մեկ փուլ:

Սակայն հետաքրքրական է, որ արձանագրությունների տապալումից հետո ևս Թուրքիան չէր դադարում գործընթացի շարունակության իմիտացիոն քաղաքականությունը⁴: Ակտիվացան հայ-թուրքական հասարակական բազմազան շփումները, համատեղ սեմինարները, քննարկումները, փոխայցելությունները և դասընթացները երկու երկրներում ու արտերկրում:

2011 թ. Թուրքիայի և Հայաստանի խորհրդարանների «փոքր օրակարգերից» Յյուրիխում ստորագրված հայ-թուրքական արձանագրությունների վավերացման հարցը հանելուց հետո հարաբերությունների կարգավորման խնդիրը փաստորեն սառեցվեց անորոշ ժամանակով⁵: Այդ արձանագրությունների բովանդակությունը թե՛ թուրքական և թե՛ հայկական շրջանակ-

¹ Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 12.04.2010, <http://www.president.am/hy/press-release/item/2010/04/12/news-974/>; Sarkisian Meets with Obama, Erdogan; Says Genocide Cannot be Questioned, 12.04.2010. <http://asbarez.com/79173/sarkisian-meets-with-obama-erdogan-says-genocide-cannot-be-questioned/>.

² Տե՛ս Կոալիցիայի հայտարարությունը արձանագրությունների վերաբերյալ, 22.04.2010, <http://www.aysor.am/am/news/2010/04/22/NA-protocols/140490>:

³ Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստատուերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ, 22.04.2010, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2010/04/22/news-60/>.

⁴ Տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Հայաստան-Թուրքիա. թուրքական քաղաքականության որոշ միտումներ, 25.11.2010, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5153.

⁵ Տե՛ս **Սաֆարյան Դ.**, «Ֆուտբոլային դիվանագիտության» ծավալման արդյունքում հայ-թուրքական հարաբերությունների վիճակի գնահատման հարցի շուրջ // Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), VIII, Երևան, 2012, էջ 219-228:

ներում քաղաքական տեսակետների բախման պատճառ դարձավ, սակայն երկու երկրների քաղաքական իշխանություններն արձանագրությունները վավերացման ուղարկեցին խորհրդարաններ՝ ավելի ուշ դրանք այնտեղ ստեղծեցին: Անշուշտ, քանի դեռ այդ հարցն ընդհանրապես չէր հանվել երկու երկրների քաղաքական օրակարգերից, այն չէր կարելի համարել վերջնականապես փակված կամ ձախողված, սակայն առկա պայմաններում անհնար էր նաև խոսել կարգավորման իրական փնտրտուքի կամ այդ ուղղությամբ դրական միտումների մասին:

Ստեղծումից հետո Թուրքիան հայտարարեց, որ քաղաքական և տնտեսական ոլորտներում ավելանում է նաև թուրք-ադրբեջանական էներգետիկ ամենասերտ համագործակցությունը, այսինքն՝ տնտեսական նոր խթաններով ամրապնդվում է երկու երկրների այն ընդհանուր շահը, որը չի խաթարվի այնպիսի գործոնով, ինչպիսին հայ-թուրքական հարաբերությունների միակողմանի կարգավորումն է: Սերտորեն համագործակցելով Հայաստանի միջազգային ազդեցությունը, հեղինակությունը և վարկը նսեմացնելու գործում՝ Թուրքիան և Ադրբեջանը հետևողականորեն ցուցադրում էին, որ առայժմ կարծես թե չկան այդ համագործակցությունը զսպող արտաքին ազդակներ ու խթաններ՝ ուղղված Հայաստանի հետ ավելի հավասարակշռված հարաբերություններ հաստատելուն¹:

Հավելենք, որ 2015 թ. փետրվարին՝ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումից վեց տարի անց, Ս. Մարգարյանը նամակով դիմել էր ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանին՝ տեղեկացնելով Հայաստան-Թուրքիա արձանագրությունները ՀՀ ԱԺ-ից հետ կանչելու վերաբերյալ իր որոշման մասին²:

Հարկ է նշել, որ «Ֆուտուրլային դիվանագիտության» ամբողջ ընթացքում Թուրքիայի հասարակական-քաղաքական շրջանակներում շարունակվում էր քննարկվել Հայոց ցեղասպանության թեման, և չնայած թուրքական պաշտոնական հայտարարություններում ու ԶԼՄ-ներում այն, որպես կանոն, ձևակերպվում է «այսպես կոչված ցեղասպանություն» կամ «ցեղասպանության մասին հայկական պնդումներ» արտահայտություններով³, սակայն որոշ թուրք մտավորականներ շարունակում են արժարծել այս հիմնահարցը՝ փորձելով նպաստել սեփական պատմության հետ թուրքական հասա-

¹ Տե՛ս **Սաֆարյան Ա.**, Հայ-թուրքական կարգավորման փորձերի այսօրվա տեսլականի շուրջ // «Ազգ», 05.10.2012, <http://azg.am/AM/2012100517>.

² Սերժ Մարգարյանը ԱԺ-ից հետ է կանչում հայ-թուրքական արձանագրությունները, 16.02.2015, <http://news.am/arm/news/252940.html>.

³ The armenian “Genocide”? Facts & Figures,- Center for Strategic Research, Ankara, 2007, pp.1-41. <http://www.mfa.gov.tr/data/DISPOLITIKA/Ermenilddialari/ArmenianGenocideFactsandFiguresRevised.pdf>; **McCarthy J.**, Let Historians Decide on So-called Genocide // “Turkish Daily News”, 11.04.2001, <http://www.tc-america.org/files/news/pdf/mccarthy-historian.pdf>; **Smith R., Markusen E., Lifton R.**, Professional Ethics and the Denial of Armenian Genocide,- Hdocaust and Genocide Studies, V9 N1, Spring 1995, pp. 1-22.

րակության առերեսման գործին: Այսուհանդերձ, ակնհայտորեն վաղաժամկետ է խոսել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ Թուրքիայում էական տեղաշարժերի մասին: Թուրքիայի պաշտոնական շրջանակները շարունակում էին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը կասեցնելուն ուղղված քայլերը:

Չնայած Հայոց ցեղասպանության իրողության վերաբերյալ բազմաթիվ փաստերի առկայությանը՝ Հայերի նկատմամբ 1915 թ. իրականացված ցեղասպանության ժխտումը թուրքական իշխանությունների կողմից շարունակվում է մինչև օրս: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Թուրքիայի իշխանությունները հետևողականորեն շարունակում էին Հայոց ցեղասպանությունը ժխտելուն ու միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելուն ուղղված աշխատանքները, որոնք իրականացվում են նոր, ժամանակակից մեթոդներով ու ամենատարբեր ուղղություններով՝ քարոզչական, դիվանագիտական, քաղաքական, գիտական և հասարակական: Այս զարգացումները մի կողմից ցույց են տալիս թուրքական քարոզչամեթոդների մշակված և հետևողական պայքարը ցեղասպանության փաստի ճանաչման դեմ, իսկ մյուս կողմից՝ ապացուցում կեղծիքի վրա հիմնված այդ քաղաքականության սնանկությունը:

Григор Аршакян – *Турецко-армянские отношения в условиях новой ситуации, сложившейся на Южном Кавказе*

В статье анализируются ситуация, сложившаяся на Южном Кавказе после пятидневной российско-грузинской войны в 2008 г., и основные особенности новой политики, проводимой Турцией. Основательно рассматриваются выдвинутые Эрдоганом в августе 2008 г. главные аспекты проводимой Турцией политики стабильности на Кавказе и реализации идеи о создании платформы сотрудничества, преследуемые ею цели, а также важнейшие причины несостоятельности этой идеи. В контексте радикальных преобразований региональных отношений обсуждаются основные предпосылки начала нового этапа армяно-турецких отношений в 2008 г., ключевые этапы “футбольной дипломатии”, начатой по инициативе президента РА, подписанные между Арменией и Турцией дипломатические протоколы, а также влияние азербайджанского фактора на двусторонние отношения.

Grigor Arshakyan – *Turkish-Armenian Relations in South Caucasia the New Situation Created by Conditions*

The article analyzes the situation of South Caucasus in 2008 after the Russian-Georgian five-day war and the main features of the new policy adopted by Turkey. It also refers to the main aspects of the policy pursued in 2008 of August by Erdogan put forward for the implementation of the idea of Caucasus Stability and Cooperation Platform, its goals, as well as the most important reasons that the idea has failed. The main prerequisites for the start of a new stage of Armenian-Turkish relations in 2008, the key stages of the "football diplomacy" launched by the RA President's initiative, diplomatic protocols signed between Armenia and Turkey, as well as a reflection of the Azerbaijani factor on the bilateral relations in the context of the dramatic transformation of regional relations are discussed.